ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» հունիսի 2025 թ. N 62 - Ա/1

ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N 825-Լ որոշման հավելվածի 11-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

7/4/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2025 թ. հունիսի 04 -ի N 62 - Ա/1 հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

---------- «-----» ---------- 20---- թ.
(կնքման վայրը)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության ----------
(տարածքային կենտրոնի անվանումը)
տարածքային կենտրոնը, այսուհետ՝ Տարածքային կենտրոն, ի դեմս տնօրեն ----------

---------- - ի, որը գործում է----------
(ազգանունը, անունը, հայրանունը) (կանոնադրության կամ լիազորագրի)

հիման վրա, մի կողմից,

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, պետական գրանցման օրը, ամիսը, տարեթիվը, պետական գրանցման վկայականի համարը, կամ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործատուի անունը, հաշվառման վայրը)

այսուհետ՝ Գործատու, ի դեմս ---------- ,
(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)
որը գործում է ---------- հիման վրա, մյուս կողմից
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

(բոլորը միասին համատեղ հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 20-ի N 825-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան անապահովության գնահատման համակարգով անապահով ճանաչված ընտանիքների աշխատունակ անձանց (այսուհետ՝ անձ) վարձատրվող հասարակական աշխատանքի դիմաց Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին աջակցության տրամադրումն է:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության, Գործատուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ անձանց վարձատրվող հասարակական աշխատանքի դիմաց աջակցության տրամադրման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում Գործատուին աջակցություն տրամադրելուն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) ծրագրի շրջանակներում ընդգրկված յուրաքանչյուր անձին վճարելու համար Գործատուին մեկ մարդ/օր աշխատանքային ծավալի համար տրամադրել գումար՝ Պայմանագրի 6-րդ կետով սահմանված չափով,

3) ամսական առնվազն մեկ անգամ իրականացնել ծրագրի կատարման ընթացքի մոնիթորինգ,

4) ծրագրի դադարեցման մասին տեղեկատվությունը նշել e-work.am հարթակում,

5) չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

3. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Գործատուի և անձի միջև նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում առցանց Գործատուից ստանալու աշխատանքային պայմանագրի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը,

2) Գործատուից ստանալու տեղեկատվություն՝ ծրագրային առաջարկով սահմանված ժամկետում ծրագիրը չսկսվելու մասին,

3) իրականացնելու Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

4. Գործատուն պարտավորվում է՝

1) Պայմանագիրը կնքելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում անձի հետ կնքել նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր, որի էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը՝ այն կնքելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, առցանց ներկայացնել Տարածքային կենտրոն,

2) ծրագրային առաջարկով սահմանված ժամկետում ծրագիրը չսկսվելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում նշում կատարել e-work.am հարթակում և տեղեկացնել Տարածքային կենտրոնին,

3) ծրագրային առաջարկով սահմանված ժամկետի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում e-work.am հարթակ մուտքագրել տեղեկատվություն համապատասխան կատարված աշխատանքների արդյունքների մասին,

4) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում անձի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ, աշխատանքային ունակությունների և կարողությունների զարգացմանը նպաստող անհրաժեշտ միջավայր,

5) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել անձի աշխատանքի էական պայմանները կամ նրա համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի:

5. Գործատուն իրավունք ունի՝

1) Տարածքային կենտրոնից պահանջելու չմիջամտել իր և անձի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և իր կողմից իրականացվող գործունեությանը,

2) Տարածքային կենտրոնից պահանջելու տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ իրականացվող ծրագրի շրջանակներում իր իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ,

3) Պայմանագրի 6-րդ կետով սահմանված չափով Տարածքային կենտրոնից ստանալու ծրագրի շրջանակում ընդգրկված յուրաքանչյուր անձին վճարելու համար իրեն տրամադրվող գումարը,

4) Տարածքային կենտրոնից պահանջելու չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք իր համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

5) իրականացնելու Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Պայմանագրի համաձայն՝ ծրագրի շրջանակներում ընդգրկված յուրաքանչյուր անձին վճարելու համար Գործատուին մեկ մարդ/օր աշխատանքային ծավալի համար տրամադրվում է գումար 3500 դրամի չափով՝ ներառյալ եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը:

7. Պայմանագրի 6-րդ կետում նշված դրամական միջոցները Գործատուին են վճարվում Որոշման հավելվածով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում են e-work.am հարթակի միջոցով կամ գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

10. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ՝

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունք,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

12. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

14. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

15. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

16. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

17. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

18. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է Որոշման հավելվածում նշված պահանջներին համապատասխան: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

19. Պայմանագիրը կազմված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
միասնական սոցիալական ծառայության

_____

(տարածքային կենտրոնի անվանումը)

տարածքային կենտրոն
Գտնվելու վայրը ----------
Հեռ. ----------
Էլ. փոստ. ----------
Հ/հ ----------
ի դեմս ----------

_____

(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

_____

(ստորագրությունը)

Կ.Տ. -------- ---------- 20--- թ.

Գործատու՝

_____

(գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը ----------
Հեռ. ----------
Էլ. փոստ. ----------
Հ/հ ----------
ՀՎՀՀ ----------
ի դեմս ----------

(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրությունը)

Կ.Տ. -------- ---------- 20 ------թ.